

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՄԱՆ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒՄԸ ՀԱՅ
ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ քերականագիտության ձևավորման սկիզբ է համարվում հույն քերական Դիոնիսոս Թրակացու (2-րդ դ. մ.թ.ա.) «Քերականական արվեստ երկի» թարգմանությունը: Թրակացու այդ երկի թարգմանությամբ և մեկնությամբ ավելի քան հազար տարի զբաղվեցին հայ հետազա մեկնիչները՝ շարադրելիս սեփական հայացք ունենալով, մի դեպքում հաստատելով, մի դեպքում մերժելով հույն քերականին, հենվելով հունարենի և հայերենի տարբերությունների վրա, հարմարեցնելով մեր լեզվի իրողություններին:

Թրակացու «Քերականության արվեստ»-ում առաջին անգամ լեզվի հարցերը ուսումնասիրվում են փիլիսոփայությունից առանձին և նվիրվում են գրական բնագրերի ընթերցանությանը, բացատրությանը, ստուգաբանությանը. Թրակացին քերականությունը սահմանում է՝ հմտություն, ամենից հաճախ հանդիպածի իմացություն. «Քերականութիւն է հմտութիւն. որք ի քերդողացն եւ ի շարագրաց իբրու բագում անգամ ասացելոց»:¹ Թրակացու «Քերականությունից» դուրս է մնում շարահյուսությունը՝ որպես քերականական ուսմունքի մի ճյուղ: Ենչտը դնելով ձևաբանության, խոսքի մասերի քննության վրա՝ Թրակացին հպանցիկորեն է անդրադառնում շարահյուսությանը, նախադասության՝ որպես խոսքի միավորի ձևավորման սկզբունքներին: Թրակացին «բանին» անդրադառնում է ընդամենը մեկ նախադասությամբ ԺԲ գլխում՝ «Յաղագս բանի» վերնագրի տակ, այն էլ՝ աստիճանաբար տալով տառի, վանկի, բառի՝ որպես մեկը մյուսի բացահայտիչ և բաղկացուցիչ մասի սահմանումները: Բառը սահմանվում է որպես նախադասության կամ «բանի» շարակարգի ամենափոքր մաս՝ («Բառ է մասն դուզնաքեայ ըստ բաղդասության բանի»²), իսկ բանը՝ logos-ը՝ որպես բառերի հետևողական շարք, որն արտահայտում է «ինքնակատար», վերջավորված միտքը՝ «Բան է հետևակ բառի շարադրութիւն գտրամախոհութիւն ինքնակատար յայտնելով»³: Սահմանումին անմիջապես հետևում է. «Եւ բանի մասունք են ութ. անուն, բայ, ընդունելութիւն, յաւղ,

դերանուն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ»⁴: Հունարեն «logos» եզրույթը հայերեն թարգմանվել է «բան» ընդհանրացնող բառով, որը և՛ նախադասություն, և՛ խոսք է նշանակել: Թվարկելով «մասունք բանի»-ն՝ Թրակացիները նկատի է ունեցել ոչ թե նախադասության անդամները, այլ խոսքի մասերը: «Մասունք բանի»-ն կազմում են նախադասության՝ «բան»-ի ատաղձը, բայց նախադասությունն ու խոսքը նույնացնելիս նույնացվում են նաև խոսքի մասն ու նախադասության անդամը, չի ընկալվում դրանց՝ լեզվական տարբեր մակարդակների պատկանելը և չի տարբերակվում նրանց միջև եղած հարաբերությունը: Հայ շարահյուսագիտության գլխավոր նյութը դառնում է ոչ թե նախադասությունը. այլ խոսքի մասերի կապակցությունը, միմյանց նկատմամբ ունեցած զանազան հարաբերությունները:

«Ընդհանուր առմամբ անտիկ աշխարհում չկար նախադասության ուսմունք, այլ միայն բառազուգորդման ուսմունք. քննվում էին խոսքի մասերի զուգորդման կանոններ. խոսքի մասերն ու նախադասության անդամները չէին տարբերվում, և ուշադրություն չէր դարձվում զուգորդման նախադասություն կազմելու փաստի վրա»⁵: Եվ որքան էլ Թրակացու «Քերականության» հայ թարգմանիչները բառացի չընդօրինակեին բնագիրը, ստեղծագործաբար փոխադրեին՝ հարմարեցնելով հայերենի իրողություններին, կրճատումներ ու հավելումներ անեին հայ քերականագիտության հիմքը մնում էր Թրակացու երկը: Սակայն «Հունարենի քերականագիտության նվաճումները ժառանգելու հետ հայերենի նոր սկզբնավորվող քերականությունը ժառանգում է նաև Թրակացու քերականական այնպիսի հակասություններ ու անհետևողականություններ, որոնցից հայ քերականագիտությունը հետագայում դարերով չի կարողանում ազատվել»⁶:

Սկսած Թրակացուց և նրա հայ մեկնիչներից՝ ընդհանրապես մինչև 17-18-րդ դարերը հայ քերականագիտության մեջ շարահյուսությունը հանդես էր գալիս ձևաբանությանը ձուլված և առանձին իրողություն, քերականության առանձին մաս չէր համարվում: Այնուամենայնիվ Թրակացուն հաջորդող, նրան մեկնող հայ քերականները շարահյուսությանը, դրա հիմնական առարկա հանդիսացող նախադասությանը վերաբերող առանձին տեղեկություններ, սահմանումներ կամ մեկնաբանություններ տալիս էին իրենց աշխատությունների «Յաղագս

բանի» կամ «Կետադոքսիան» ենթագլուխներում, մասամբ էլ՝ շաղկապների՝ որպես նախադասության՝ բանի միտքը շաղկապող խոսքի մասի առնչությամբ, երբեմն էլ՝ խոսքի մասերի շարահյուսական կիրառությունների սկզբունքները նշելիս, բայց այդ եղածը նախ չէր անցնում 1-2 նախադասությունից, հետո էլ շարահյուսական համակարգին վերաբերող խնդիրները մեկնաբանվում էին ձևաբանական համակարգի զգույթներով:

Գ.Ջահուկյանը նշում է, որ հայ քերականներին ծանոթ է եղել նաև Ապոլլոնիոս Դիսկոլոսի «Շարահյուսության մասին» գիրքը, որը հունական քերականության ամենակարևոր նվաճումն է Դիոնիսոս Թրակացուց հետո: «Ծիշտ է, Դիսկոլոսը չի մշակել հատուկ շարահյուսական ըմբռումներ, ելնում է ոչ թե նախադասության անդամների գաղափարից, այլ խոսքի մասերից, բայց և այնպես կատարել է առաջին գմահատելի փորձը: Դիսկոլոսի գիրքը 5-15-րդ դդ. հայ քերականության վրա ազդեցություն չի ունեցել, ուստի շարահյուսությունը երկար դարեր հայ քերականության համար մնացել է terra incognita»⁷:

Մեզ հասած հայերեն առաջին գրավոր լեզվում արդեն կային արդի ըմբռնմամբ պարզ ընդարձակ նախադասությունն իր բոլոր բաղադրիչներով, բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների գրեթե բոլոր ենթատեսակները, ուղղակի խոսքը, տրոհվող լրացումները, հաստատական, ժխտական, հարցական նախադասություններն իրենց բոլոր արտասանական երանգներով:

Թրակացու «Քերականության» հայ մեկնիչներից հայտնի են Մովսես Քերթողը, Անանուն Մեկնիչը, Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Մագիստրոսը, Համամ Արևելցին, որոնց ապրած ժամանակաշրջանը 5-8-րդ դարերն են: Դավթի և Մովսեսի մեկնությունները շատ բանով են տարբերվում Թրակացու «Քերականություն»-ից, մինչդեռ Անանունը բառացի է թարգմանում Թրակացուն: Դավթի և Մովսեսի՝ Թրակացուց տարբերվելը սկսվում է հենց քերականական արվեստի ըմբռումից: Եթե Թրակացին քերականությունը համարում է հմտություն՝ «եմպիրիա», որը հարկավոր է արձակագիրների և բանաստեղծների երկերը ընթերցելու համար, ապա Դավիթը քերականության նման մեկնաբանումը համեմատում է սովորությամբ առաջնորդվող անասուններին, իսկ մարդը բանական արարած է, և միայն հմտությունը, սովորությունը բավարար չէ.

«Եւ է հմտութիւն այսպիսի ինչ. հարցեալ ցքեզ բայ եւ կամ անուն եւ քո ոչ կարացեալ ըստ արժանւոյն պատասխանել ի նախնեացն անկար սովորութիւն ըստ նմանութեան երթալոյ անասնոցն ի սովորական տեղիսն»⁸:

Սովսեսն այդ միտքն ավելի է ընդգծում. «Աղքեր արուեստից միտք են, խորհուրդ հանճարեղ՝ արարիչ արուեստից եւ արուեստ՝ աճեցուցիչ մտաց»⁹:

Դավիթը իր «Մեկնութիւն քերականին» երկում անդրադառնում է բան-ին և մինչ բան-ի սահմանումը տալը սահմանում է «բառ»-ը՝ այն համարելով բան-ի ատաղծ, ինչպես նաևի ողնափայտը, որ հիմք է նաևի. «Բառ է մասն դուզնաքեայ ըստ բաղդասութեան բանի: Դիմն արկան է այդ բանի զբառսն, որպէս նաւի զողնափայտն»¹⁰: Եվ թեպէտ բառ-ը բան-ի «դուզնաքեայ» մասն է, բայց «զմեծի ունի զարութիւն և անգամ լեալ բառդ բանի, առ որով իմանալի է եւ զայն»: Դավթի՝ նախադասության սահմանումը ևս թրակացու նախադասության՝ բան-ի սահմանումից տարբերվում է: Սկզբում կրկնում է թրակացուն՝ «Բան է հետեւակ բառի շարադրութիւն», այնուհետև ավելացնում. «Եւ հետեւեալդ ասելով զդա իբրև զհետ անկեալ բառիցն համեմատ իմն շարագրոցն, զորս ի մանրամասն գործոյն իւրեանց ասացին հետեւակս, իսկ զքերդդոս հեծեալս, որ եւ հետեւին քաղելով ի յինքն եւ անդամս գործելով»¹¹:

«Հետեւակ բառի շարադրութիւն»-ը՝ բառերի հետևողական շարքը, շարույթը, Դավիթը համարում է արծակին հատուկ, որովհետև արծակագիրները իբրև հետևակներ, հետևում են ընդհանուր կարգին, իսկ քերթողները՝ բանաստեղծները, նման են հեծյալների, որոնք բառերը դասավորում են՝ խախտելով բնական կարգը: Դավիթը հակադրում է նախադասության անդամների շարադասության կարգը արծակվում և չափածոյում. արծակում հետևակ բառի շարադրութիւնը, որ ուղիղ շարադասութիւնն է, և չափածոյում հաճախ հանդիպող շրջուն շարադասութիւնը:

Դավիթն այնուհետև մեկնաբանում է թրակացու՝ նախադասության սահմանման 2-րդ մասը՝ դարձյալ լրացնելով և փոփոխելով: «Ձտրամախտութիւն ինքնակատար յայտնելով (Թ.), որով եւ ինքնակատար երեւի եւ զհանգամանս մտացն եւ զփոփոխմունս զլիտոցն ըստ տրամախտութեան բաւականաբար յայտնից է եւ ոչ ընդ տարակուսութեամբ զարեւն վանգին եւ կամ նոյն ինքն բառիս ինքն ըստ ինքեան յանգեալ»¹²:

Բան-ի սահմանումը սահմանափակվում է սրանով, և հետևելով Թրակացուն, նույնացնելով խոսքը և բանը-ը. Դավիթն էլ սահմանումից անմիջապես հետո նշում է. «Եւ բանի մասունք են ութ: Բայց զմասունքանի եւ զառասութիւնս եւ յաւելլով ասացին ինն»¹³:

Դավիթը, հետևելով Թրակացուն, նույնացնում է «մասունք բանին» նախադասության անդամներին՝ չտարբերակելով հունական «logos»-ի հայերեն թարգմանվող «խոսք»-ը և «նախադասություն»-ը: Այնուհետև «Յաղագս շաղկապի» ենթազխում, որտեղ սահմանում է շաղկապը որպես խոսքի մաս, կողմնակի կերպով գաղափար է տալիս բարդ նախադասության մասին, որի բաղադրիչները կապելու դերը կատարում է շաղկապը: «Շաղկապ է բառ, որ շաղկապէ գտրամախոհութիւնն ոճով: Այս շաղկապ ասի ի շաղելոյ իմն եւ՝ ի կապելոյ ի կարգի զբառն ընդ եւ զմիտս, որպես զի զմեկնութիւն բանին պատշաճապէս արտաբերեալ յայտնեսցէ»¹⁴:

Անանուն Մեկնիչն իր մեկնության հիմքում դնում է քերականության ուսումնասիրման չորս կատեգորիաները՝ տառը, վանկը, բառը և «բան»-ը:

Անանուն Մեկնիչը բառը վանկերի սոսկ միացություն է համարում և չի նշում իմաստակիր միավոր լինելը. «...բառ է մասն դուզնաքեայ ըստ բաղդատութեան բանի, այսինքն բառ ի շարադրութեան բանի մասն է շարադասութեան, վասնզի բառ շարադրութիւն է փաղառութեանց, որպէս յորժամ շարադրէ ոք զԴաւ և զԻթն եւ առնէ բառ զԴաւիթն: Եւ դարձեալ շարադրէ զԲա և Ձկուր եւ առնէ բառ զԲակուր»¹⁵: Եվ այս նույն ձևով և նույն տրամաբանությամբ, ինչպես որ բառը դիտվում է վանկերի մեխանիկական միացություն, այնպես էլ ավելի ծավալուն միավորը՝ «բան»-ը, դիտվում է որպես բառերի հետևողական շարք: Անանունը ավելորդ է համարում Թրակացու՝ «բան»-ի սահմանման մեջ թողնել այն մասը, որով «բան»-ը դիտվում է որպես ավարտուն միտք, իմաստային միավոր, «ինքնակատար տրամախոհութիւն» արտահայտող:

«Յաղագս բանի» ենթազխում (ԺԲ) Անանունը տալիս է «բան»-ի այս սահմանումը. «Բան է հետեւեակ բառի շարադրութիւն: Իսկ բան շարադրութիւն է բառի, յորժամ շարադրէ ոք զԴաւիթն զշարադրեացն եւ զպատերազմն եւ զմարացն եւ զհայոցն եւ ասիցէ յարապէս եթե Դաւիթ շարադրեաց զպատերազմն մարաց եւ հայոց, որ է բան: Արդ Դաւիթն առանձինն բառ է, եւ

պատերազմն առանձին բառ է եւ այլն, իսկ շարադրութիւն նոցա բան լսի, որ կատարէ զշարադրութիւն յինքննէ:

Իսկ ասելն բան է հետեւակ բառի շարադրութիւն, այսինքն եթե բան հետեւանայ ընդ բառսն ցան եւ ցիր եւ շարադրէ առ միմեանս զաւտարսն եւ լինի բան»¹⁶: Թվարկելով առանձին, ոչ կապակցված բառեր և ցույց տալով, որ դրանք «բան» չեն կարող դառնալ, նշում է որոշակի շարադասութեան անհրաժեշտությունը, բայց չի նշում բառերի փոփոխման հուղվման և միմյանց հետ համաձայնությամբ և խնդրառությամբ կապակցվելու անհրաժեշտությունը:

Սովսես Քերթողի կարծիքով քերականը պետք է քաջատեղյակ լինի լեզվի փաստերին և կարողանա դրանք «Դատողական հրամաններով» հմտորեն ենթարկել բանականության պահանջին. «Քերդող է, որ զմասունս գիտէ բանին եւ ճանաչի զդեմս խաւսիցն, զոր ինքն տեղեակն ի լեզուին, զի քերունն ի վերայ ողարկութեան բանին ասացաւ, զի քերի և սրբէ ըստ ամենայն դատողական հրամանաց եւ բերէ ի ցանկութիւն լսողաց անընդդիմադրելի բանիւք»¹⁷: Քերականը պիտի առաջնորդվի «դատողական հրամաններով», որպեսզի կարողանա անխոցելի դարձնել իր արվեստը:

Իր այս պահանջի կիրառմամբ Սովսես Քերթողը «բան»-ը գերադասում է «տառից», «վանկից» և «բառից»՝ որպես որակապես տարբեր և բարձր միավոր: Ինչպես Դավիթ Քերականը, այնպես էլ Սովսես Քերթողը ևս հաշվի է առել «բանի» իմաստային կողմը. «Բան սեռականագոյն սեռ կոչի, զհանուրս յինքն պարունակեալ, ենթակայէ զիսկզբունս եւ զանսկզբունս, զգալիս եւ զիմանալիս»¹⁸: «Բանը» համարելով ամենամեծ սեռը՝ միավորը, նախորդ քննարկած միավորների մեջ (տառ, վանկ, բառ)՝ միաժամանակ այն չի դիտում որպես մեխանիկորեն բարձրը դրանցից՝ ըստ տարրերի քանակի, այլ նշում է «բանի» որակական տարբերությունը տառից, վանկից և բառից: Ընդամենը մեկ նախադասությամբ է Սովսես Քերթողը բնութագրում և սահմանում նախադասությունը՝ կրկնելով ու համարյա չտարբերվելով նախորդներից:

Դ.Թրակացու «Քերթության արվեստ» երկի թարգմանության և մեկնության առաջին հեղինակները՝ Դավիթը, Անանուն Սեկնիչը և Սովսես Քերթողը դրեցին հայ քերականագիտական մտքի հիմքը. նրանց երկերում կան քերականական

հիմնական սկզբունքները, փորձեր են արվել քերականությունը առանձնացնել փիլիսոփայությունից, տրամաբանությունից և համարել առանձին գիտություն:

Բայց թարգմանելով և մեկնաբանելով հույն քերականի երկը՝ թարգմանիչները օգտվում էին պատրաստի եզրույթներից և դրանց մեծությամբ ստեղծում հայերեն համարժեքները, որը երբեմն հանգեցնում էր սխալների և մեքենայական ընդօրինակման: Թրակացու սահմանած «բան»-նախադասությունը դեռ երկար դարեր՝ մինչև 17-18-րդ դդ. քննարկվում և մեկնաբանվում էր և՛ որպես խոսք, և՛ որպես նախադասություն, որն էլ հանգեցնում էր նրան, որ շարահյուսական համակարգին վերաբերող բոլոր խնդիրները մեկնաբանվում էին ձևաբանական համակարգի տերմիններով: Դա նաև արդյունք էր Թրակացու՝ «բան»-ի սահմանմանը անմիջապես հետևող «Եւ բանի մասունք են ութ...» նախադասությունը, որով և «...նախադասության ըմբռնումը և նրա անդամների անվանումները հանգում էին խոսքի մասերի կապակցության ուսումնունքին»¹⁹:

Ստեփանոս Սյունեցիին, իր «Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ անդրադառնալով «բանի» ըմբռնմանը, շատ չի տարբերվում իր նախորդներից, թեպետ ասում է իր նոր խոսքը: «Բանի» ավանդական սահմանման տարբեր մասերը նա մեկնաբանում է առանձին-առանձին. ա) «Իսկ ընդ ասելն. եթե բան է հետեւակ բառի շարադրութիւն, քանզի հետեւանայ հոլովելով զբառսն եւ ածեալ ենթադատութիւն միմեանց»²⁰: Առաջ անցնելով իր նախորդներից՝ Սյունեցին գտնում է, որ նախադասության ձևավորման համար միայն բառերի շարադասությունը՝ «Յետեւակ բառի շարադրութիւն»-ը բավարար չէ, անհրաժեշտ է նաև նախադասության անդամների կապակցումը, թեքումը, որն էլ իրագործվելու է հոլովական վերջավորություններով: Կարևոր են նաև նախադասության անդամների միջև ընկած դադարները: Ապա շարունակում է բ) «Իսկ ասելն եթե զտրամախոհութիւն ինքնակատար յայտնելով, այսինքն, հաստատախոհ կատարումն յինքեանց ցուցանէ մեզ ցան եւ տարած բառիցն, որպէս արքայութիւն, նեղութիւն և անծկութիւն եւ որք այսպիսիք»²¹: Պատահական՝ «ցան եւ տարած» բառերը՝ արքայություն, նեղություն, անծկություն, դեռևս «բան» չեն, և մարդն էլ ունի տարբեր մտքեր, որոնց ձևավորման համար էլ կազմում է տարբեր նախադասություններ՝ բառային տարբեր զուգորդումներով. գ) «Բայց ասի տրամախոհութիւն եւ փոխադրութիւն,

քանզի արդարեւ իսկ փոփոխի խորհուրդ մտացն յայլ եւ յայլս եւ սոյնպէս ծնանի և զբանս զանազան ի միմեանց այլ եւ այլ բառիւք»²²:

Սյունեցու երկուն ամառին անգամ ենք հանդիպում նախադասության ծնավորման համար կարևոր համարվող հնչերանգային դադարի ըմբռնմանը, որը գրության մեջ արտահայտվում է ստորակետով և միջակետով. դ) «...բան ասէ զյայտնեալ և զկատարեալ խորհուրդն, որ ստորակիտաւն և միջակիտաւն եւ աւարտելովն յայտնի եւ դադարէ խորհուրդն»²³:

«Յաղագս վերծանութեան» բաժնում Սյունեցին նշում է նաև հնչերանգի և առողանության դերը նախադասության ծնավորման մեջ՝ տալով նախադասությունների՝ ըստ հնչերանգի տարբերակման ամառին փորձը, որը կարևոր է դարձնում կետադրական նշանների՝ պարուկի, շեշտի, ոլորակի կիրառությունը:

«Սյունեցու մոտ,- գրում է Գ.Ջահուկյանը,- «բանն» ըմբռնվում է որպես նախադասություն՝ այդ բառի իսկական առումով: Այնտեղից էլ առաջանում է Սյունեցու կողմից խոսքի մասերի կամ «բանի մասանց» ըմբռնումը ոչ թե որպես խոսքի մասերի, այլ որպես նախադասության անդամների և նրանց կապակցության արտահայտիչների»²⁴: Հենց այս տեսանկյունից էլ Սյունեցին բայ խոսքի մասը նույնացնում է արդի ըմբռնմամբ ստորոգյալի հետ և նշում ստորոգման ամառնային դերը նախադասություն կազմելու մեջ: Բային նախապատվությունը տրվում է նաև անուն խոսքի մասին տեղ և ժամանակ վերագրելու համար, որով էլ դառնում է «բանի» կենտրոն և նույնիսկ հավասարվում է «բանի». «Եւ ասի անունդ անըմբռնելի, վասն զի արդարեւ իսկ անտեղի եւ անժամանակ է:

Իսկ բայդ ասի ուսումն, վասն զի արդարեւ իսկ յայտնելով զտեղի, զժամանակ, զթիվ, զդեմ եւ զայլ եւս պատահս»²⁵: «Մասունք բանին» Սյունեցին ըստ էության նախադասության անդամներ է կոչում, և խոսքի մասերը քննարկում է ըստ նախադասության մեջ նրանց կատարած դերի:

Ժամանակագրորեն հաջորդ հեղինակը՝ Համամ Արևելցին, ապրել է 9-րդ դարում և ստղծագործությունն էլ կոչվում է «Վերլուծութիւն քերականին»:

«Համամ Արևելցին իր քերականական աշխատություններում ելակետ է ընդունում հոգևոր-այլաբանական մեկնությունը և այդ պատճառով քերականա-

կան հասկացություններին տալիս է աստվածաբանական-կրոնական հիմնավորում, հաստատում աստվածաշնչի և կրոնական այլ գրքերի վկայությամբ»²⁶:

Ընդհանուր առմամբ նորություն չբերելով քերականագիտության մեջ՝ մասնավորապես ոչինչ չի ասում «բան»-նախադասության մասին. Ա.Ադոնցի վերականգնած ձեռագրում բացակայում է «Յաղագս բանի» ենթավերնագրի տակ եղած տեքստը:

Գրիգոր Մագիստրոսի «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ էլ «բան»-ի մասին կցկտուր տեղեկություններ ենք գտնում:

13-րդ դարի հայ քերականագիտության մեջ ճանաչված էր Վարդան Արևելցիին՝ իր երկու աշխատություններով՝ «Մեկնութիւն քերականի» և «Վասն բանին մասանց»: Վերջինիս դերը, որը երկու էջանոց փոքրածավալ աշխատություն է, հաճախ ավելի բարձր է գնահատվել ուսումնասիրողների կողմից:

«Չայ քերականական գրականությունը դարեր շարունակ գոյություն է ունեցել ու զարգացել որպես մեկնողական գրականություն, որի հիմնաքարը հանդիսացել է Թրակացու քերականությունը, իսկ Արևելցու «Վասն բանի մասանց» փոքրածավալ աշխատությունը առանձնահատուկ տեղ է զբաղում հայ քերականական գրականության մեջ: Չանձին Արևելցու, 13-րդ դարի սկզբի տասնամյակում քերականությունը գտվում է ճարտասանական ու փիլիսոփայական գիտությունների խառնուրդից և հանդես է գալիս որպես զուտ քերականական գիտություն»²⁷:

Գ.Ջահուկյանը Արևելցու գրքի մասին նշում է. «Վասն բանին մասանց» փոքրիկ աշխատությամբ քերականությունն ազատում է փիլիսոփայության, ճարտասանության և պոետիկայի տարրերից, բանասիրության իմաստով գործածվող տարտամ և չտարբերակված դիսցիպլինը վերածում է մի դիսցիպլինի, որն ունի իր որոշակի առարկան՝ «բանի մասունք»-ը²⁸:

«Վարդանի «Վասն բանին մասանց»-ը հայոց լեզվի շարահյուսության սկզբունքների նկարագրության առաջին ինքնուրույն փորձն է»²⁹:

Վ.Արևելցիին նույնացնում է բանը և նախադասությունը և «Վասն բանին մասանց» երկում սահմանում է այսպես. «Բան կոչի կատարումն խորհրդոյ, երբ ասես թէ՛ հոգևոր տէրն հրամայեաց եկեղեցի շինել, կատարյալ բան է, ուր հոգևոր նախադրութիւն է, տէրն՝ անուն, և հրամայեացն՝ բայ, և եկեղեցի շինել»:

խորհուրդ կատարեալ»³⁰: «Սեկնութիւն քերականի» երկում «բան»-ի սահմանումը ավանդական ձևով է սկսվում. «Բան է հետեւակ բառի շարադրութեան՝ գտրամախոհութիւն ինքնակատար յայտնելով:

Ի վեր ել արուեստաւորս իբրև ընդ աստիճանս ի կատար շինուածոյս, զի ասէ վասն բառից, որ է մայր ամենայն բանի: Եւ «հետեւակ բառ» ասաց, որ զհետ ել և հետ իրերաց երթայ՝ հիւսելով բանն: Եւ շինի մարմին և անդամք որպէս զքնութիւն, այլև զներքսակայ իմաստքն կատարեն յայտնելով»³¹:

«Բանի» ելակետն ու հիմքը Արևելցին համարում է բառը՝ ինչպէս նաև ի համար ողնափայտն է միավորողը նրա տարբեր մասերի կամ տան համար՝ նրա հիմքը, որի վրա կառուցվում է ողջ շինութիւնը:

«Եւ սա՛ է սկիզբն և հիմն բանի՝ որպէս ողնափայտ նաւի և հիմն տան»³²:

Բառը ամեն մի խոսքի, մտքի մայրն է՝ «մայր ամենայն բանի», և զուգորդվելով այլ բառերի հետ, հյուսում է խոսքը, արտահայտում մտածողության բազմազան դրսևորումները: Բառը «բան»-ի հիմք դիտելու և նաև ի ողնափայտին նմանեցնելու մեջ Արևելցին հետևում է Դավթին, բայց առաջ անցնելով՝ նշում է՝ բառն է աշխարհի ճանաչողության հիմքը և այն աստիճանը, որով կարելի է բարձրանալ՝ շինութեան զագաթը հասնելու համար. «Ի վեր ել արուեստաւորս, իբրև ընդ աստիճանս ի կատար շինուածոյս, զի ասէ վասն բառից, որ է մայր ամենայն բանի»³³: Այնուհետև խոսելով «մասանց բան»-ի մասին՝ Վ.Արևելցին նշում է, որ «բան»-ը ոչ թէ տեսակներ ունի, այլ «մասունք» և «բան»-ը սեռ է, «որ կարէ բազում մասունս ծնանիլ ինքնամանն»:

«Բան»-ը համարելով «սեռ»՝ Արևելցին կատարում է ծավալուն ընդհանրացում, որն իր մեջ է ներառում խոսքի նվազագույն միավորները՝ խոսքի մասերը հանդիսացող բառերը:

«Վասն բանին մասանց» աշխատության մեջ «բան»-ի սահմանմանը հետևում է խոսքի մասերի տարբերակումը, որտեղ հիմք է ճանաչվում նրանց՝ նախադասության մեջ ունեցած արժեքը, որը շարահյուսական ըմբռնում է:

Արևելցին «բանը» նույնացնում է նախադասությանը, իսկ որպէս նախադասության անդամներ հիշատակվում են անունը, բայը, նախադրությունը, մակբայը, ընդ որում անուն անվանումը նույնացվում է ենթակային, նախադրությունը՝ անվան լրացումներին, բայը՝ ստորոգյալին, մակբայը՝ բայի լրացումներին:

Նյութական խոսքի մասերին տրվող ձևաբանական և շարահյուսական ձևակերպումները երևում են «Մեկնութիւն քերականին» և «Վասն բանին մասանց» աշխատություններում խոսքի մասերին տրված հետևյալ տարբեր սահմանումներից.

«Մեկնութիւն քերականի»

1. «Անուն է մասն բանին հոլովական մարմին և իր նշանակելով. մարմին, որզան՝ քար և իր, որպէս խրատ»:
2. Բայ է բառ անհոլով. ընդունական ամանակաց. դիմաց և թուոց. որ ներգործութիւն և կետ յարկացուցէ»
3. «Նախադրութիւն է բառ նախադրեալ, յամենայն մասունս բանի ըստ բարդութեան և ի բարդասութեան, և են ամենայն յիսուն, ներ, արտ, ատր, ապ...»

«Վասն բանին մասանց»

1. «Իսկ բանին առաջին մասն է անունն է և զգոյութեան սահմանն ունի անուն. ընդ որով և մարմին և ամմարմին երկինք, երկիր, աստուած, մարդ, ծիարծուի»
2. «Յետ անուանն բայ է, որ զանունն և զգործն ցուցանէ, որպես ասել՝ «Թորոս դարպաս շինեաց»:
3. Վեցերորդ մասն բանին նախադրութիւն է, որ է ճոխաբանութիւն, յորժամ հեզ ինչ դնես առաջի բանին՝ քարի թագավոր, իմ ապավէն պարոն, Քրիստոսապահ Թորոս:

Անունը համարում է առաջնային, նախադասության հիմնական անդամ, բայը գործ, գործողություն ցույց տվողն է (Թորոս դարպաս շինեաց):

Բայը նախադասություն կազմող հիմնական բառերից մեկն է, «ասութիւնը», որն ունի դեմք, թիվ, ժամանակ: Նախադրությունը, որ «Մեկնութիւն...»-ում հողի և շաղկապի հետ համարում է սպասարկու խոսքի մաս, «Վասն...»-ում նույն տերմինով անվանում է անվան լրացումները՝ որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը: Վ.Արևելցին տարբերակում է նաև «կատարեալ բան»-ը, որն է ենթակայից և ստորոգյալից (անունից և բայից) և երկրորդական անդամներից կազմված նախադասությանը: Վ.Արևելցին խոսքի մասերի ավանդական անվանումները քննելիս ընդգծում է բռերի դերն ու պաշտոնը նախադասության մեջ, այսինքն՝ նրանց շարահյուսական հասկացություններն ու էությունը:

«Նա որոշակիորեն չի տարբերակել շարահյուսությունը ձևաբանությունից, որը, իհարկե, ոչ թե իր, այլ ժամանակի մեղքն էր: Բայց այն, ինչ նա արել է 12-րդ դարի վերջին և 13-րդ դարի սկզբներին, նորություն է մեր և համաշխարհային քերականագիտության պատմության մեջ, ուստի և պատիվ է բերում մեր քերականագիտության ընդհանուր մշակույթին»³⁴:

«Վարդանը դեռևս չունի լեզվի ձևաբանական և շարահյուսական կարգերի փոխհարաբերության որոշակի ըմբռնում շարահյուսական երևույթների քննության մեջ գործածում է ձևաբանական կարգերի անվանումներ»³⁵:

«Յեղիմակը (Արևելցի) դեռևս չի հասել ձևաբանական և շարահյուսական կատեգորիաների փոխհարաբերության որոշակի ըմբռնման, ուստի և շարահյուսական կարգերը քննելիս պահպանում է ձևաբանական կարգերի անվանումները: Սասամբ էլ այս է պատճառը, որ Վարդանի նորամուծությունը մնաց մեկուսի և հետագա զարգացում չունեցավ նրա անմիջական հաջորդների կողմից: Յետագայում շարահյուսական տեղեկությունների ներթափանցումը քերականության մեջ կատարվեց Վարդանի աշխատությունից անկախ»³⁶:

13-րդ դարում ապրած *Յովի.Երզնկացու* անունով մեզ է հասել «Հաւաքումն մեկնութեան քերականի» երկը, որը, ինչպես հաստատում են ուսումնասիրողները, մինչև այդ եղած մեկնություններից ամենածավալունն է ու բովանդակալիցը: Գ.Ջահուկյանը գտնում է, որ «Երզնկացին ի մի է հավաքել և ճարտար կերպով ամբողջացրել քերականների նախորդ սերունդների կատարած աշխատանքը»³⁷: Երզնկացին սահմանում է «բան»-ը. «Բան ի շարագրութենէ բառիցն լինի, որպէս և բառն ի փաղառութանց և վանգից, որպէս յորժամ շարագրէ ոք բարկութիւն և առնէ բառ՝ նարկութիւն: Նոյնպէս և զբառսն շարագրելով առնէ բան՝ կցելով ընդ միմեանս: Եւ լինի բան ի բառից և ի բայէ»³⁸:

Յ.Երզնկացին ավանդապահ է և շատ չի տարբերվում նախորդներից. «բան»-ը գոյանում է բառերի կանոնավոր կապակցումից, ինչպես որ բառն է գոյանում վանկերից և վանկը՝ տառերից: Բայց նախադասությունը կազմվում է բայից և բառից, բայից, որը «բան»-ի գլխավոր և հիմնական բաղադրիչն է, որովհետև բայը նա համարում է անվան «ներգործությունը» ցույց տվող բառ: Միաժամանակ անվան և բայի ավելի կամ պակաս կարևոր խոսքի մաս լինելու խնդրում նախապատվությունը տալիս է անվանը, իսկ մյուս խոսքի մասերը բացահայտում են անվան այս կամ այն կողմը. «Նախադասեալ եղև անուն քան զբայ, որպէս և ցուցան իսկ նորին պատճառն, զի անուն գոյութեան ունի զտեղի և ոչ զներգործութեան: Ըստ որում և բայի արժանաւորէ երկրորդիս հասնել դասու և սկսմամբ»³⁹: Բային նախապատվություն է տալիս նախադասության մեջ՝ Արևելցու նման նույնացնելով անունը ենթակայի և բայը՝ ստորոգյալի հետ:

«Բան»-ի մյուս բաղադրիչը Երզնկացին համարում է մյուս խոսքի մասերը, որոնց տալիս է «բառ» ընդհանուր անունը: Չտարբերելով նախորդ քերականներից՝ Երզնկացին «բան»-ը սահմանում է նաև որպես արտահայտված անթերի միտք՝ «գյահտնեալ և զկատարեալ խորհուրդն, որ ստորակիտաւն և միջակիտաւն եւ աւարտելովն յայտնի եւ դադարէ խորհուրդ»: Երզնկացին ևս նշում է հնչերանգի, կետադրական նշաններով արտահայտվող դադարների կարևորությունը: Ինչպես տեսնում ենք, Երզնկացին նախադասություն-«բան»-ը սահմանելիս որևէ նոր բան չի ավելացնում նախորդ քերականների սասածներին, սակայն ցուցաբերում է որոշ ինքնուրույնություն:

Խոսելով կետադրական նշանների, առոգանության, տողադարձի (հեզի) մասին՝ Սկևռացին սահմանում է նաև «բան»-ը. «Յիւսեալ ապա բառքս ընդ իրեարս եւ կատարեն բան. որգոն աստուած հաստատեայ զմարդն»⁴⁰:

Լորոթյուն է «հիւսեալ» բառը. հյուսվում, ոչ թե հետևում են իրար բառերը: Սկևռացին «հյուսել» բառը գործածում է կապակցության իմաստով՝ չնշելով, սակայն, նախադասության անդամների՝ բառերի հյուսվելու համար անհրաժեշտ փոփոխությունները: Կետադրության և առոգանության հարցերի ամնչությամբ խոսում է «բան»-ի մասին՝ նշելով, որ նախադասության մեջ անհրաժեշտ են դադարները, որոնք ամբողջացնում են նախադասությունը՝ իր բաղադրիչ մասերով: Սկևռացին, փաստորեն, առաջնային պլան է մղում նախադասության ավարտուն հնչերանգի, դադարների և կիսադադարների խնդիրը, որն արտահայտվում է գրավոր խոսքում կետադրությամբ: «Կատարեալ կետն կատարումն խորհրդոյն վասն որոյ և տուն կոչի վասն կատարման բանին, որ ունի զշտեմարանեալ յինքն իմաստս լիապէս»: Սկևռացին «կատարեալ կետը» ավանում է տուն, դա վերջակետն է, որով նշվում է «բան»-ի կատարման ավարտը, որն ամբողջությամբ իմաստ է արտահայտում:

13-րդ դարի վերջին մեծ հռչակ ձեռք բերած Գլածորի վանքի համալսարանի անվանի գիտնականներից էր Եսայի Նչեցին, որն ի թիվս այլ աշխատությունների գրել է «Մոկնութիւն քերականին» երկը: Անդրադառնալով «բան»-նախադասությանը՝ Նչեցին այն ձևակերպում է որպես բառերի քերականական կանոններով ձևավորված այնպիսի կառույց, որը խոսողի մտածածն է արտահայտում, ներքին տրամախոսությունը:

«Իսկ քան շարադրութիւն է բառի, յորժամ շարադրէ ոք զԴաւիթ, զշարագրեացն և զպատերազմն, և զմարացն, և զհայոց, և ասիցէ յարապէս՝ եթէ Դաւիթ շարագրեաց զպատերազմն մարաց և հայոց, որ է բան»⁴¹:

Կարևորվում են քերականական կապակցությունը, բառերի շարահյուսական փոփոխությունները, որով խոսողի ներքին տրամախոհությունն է արտահայտում, դատողությունը, ավարտուն միտքը և անպայման ստորակետով և միջակետով և ավարտով է ամփոփվում. «Բան ասէ զյայտնեալ և զկատարեալ խորհուրդն, որ ստորակիտաւն և միջակիտաւն և աւարտելովն յայտնի և դադարէ խորհուրդն»⁴² Նույնքան կարևոր է նաև նախադասության ավարտուն հնչերանգը, որը նշվում է ստորակետով և վերջակետով:

Հետագա քերականները, չշարունակեցին հնչերանգի և հնչերանգային ավարտվածության մասին այս դրույթը որպես նախադասության բնորոշ հատկանիշներից մեկը: Այսպիսով, ելակետ ունենալով Թրակացու քերականությունը, 5-15-րդ դարերի հայ քերական-մեկնիչները շարահյուսությունը քերականության մեջ առանձին համակարգ չէին ճանաչում: Խոսքի մաս, նախադասության անդամ, ձևույթ հասկացությունները դեռևս սահմանազատված չեն, և շարահյուսական իրողությունները մեկնաբանվում և սահմանվում են ձևաբանության եզրույթներով: Նախադասության ըմբռնումը և նախադասության անդամների անվանումները հանգում էին խոսքի մասերի կապակցության ուսմունքին: Փաստորեն, միջնադարի նշված քերականներից և ոչ մեկը չարեց շարահյուսությունը քերականության առանձին բաժին դիտելու, լեզուն դեռևս չէր ընկալվում իրար հետ սերտորեն կապված մակարդակների կուռ, ամբողջական համակարգ: Առանձին պրպտումներով և լրացումներով հանդերձ՝ հայ միջնադարի քերականները մնացին Դ.Թրակացու երկի մեկնիչներ:

¹ Ն. Ադոնց, Արուեստ Չիոնիսեայ քերականին, Ս.Պետերբուրգ, 1915, էջ 1:

² Ն. Ադոնց, նույն տեղում:

³ Ն. Ադոնց, նույն տեղում:

⁴ Ն. Ադոնց, նույն տեղում:

⁵ Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, Երևան, 1980, էջ 87:

⁶ Հ. Ն. Բարսեղյան, Խոսքի մասերի ուսմունք, Երևան, 1980, էջ 10:

- ⁷ Գ.Տահուկյան, Զերականական և ուղղագրական աշխատությունը հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1951, էջ 28-29:
- ⁸ Ն.Աղոնց, «Արուեստ Դիոնիսեայ քերականին», էջ 84:
- ⁹ Նույն տեղում:
- ¹⁰ Նույն տեղում:
- ¹¹ Ն.Աղոնց, նույն տեղում, էջ 101:
- ¹² Ն.Աղոնց, նույն տեղում, էջ 101:
- ¹³ Ն.Աղոնց, նույն տեղում, էջ 101-102:
- ¹⁴ Ն.Աղոնց, նույն տեղում, էջ 120:
- ¹⁵ Ն.Աղոնց, նույն տեղում, էջ 137-138:
- ¹⁶ Ն.Աղոնց, նույն տեղում, էջ 138:
- ¹⁷ Ն.Աղոնց, նույն տեղում, էջ 159:
- ¹⁸ Ն.Աղոնց, նույն տեղում, էջ 169:
- ¹⁹ Հ.Մխիթարյան, «Ակնարկներ հայերենի շարահյուսական պատմությունից», 1990, էջ 7:
- ²⁰ Ն.Աղոնց, նույն տեղում, էջ 202:
- ²¹ Ն.Աղոնց, նույն տեղում:
- ²² Ն.Աղոնց, նույն տեղում:
- ²³ Հ.Բարսեղյան, «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը», էջ 31:
- ²⁴ Գ.Տահուկյան, Զերականական և ուղղագրական աշխատությունները..., էջ 192:
- ²⁵ Ն.Աղոնց, նույն տեղում, էջ 202-203:
- ²⁶ Գ.Տահուկյան, Զերականական և ուղղագրական աշխատությունները..., էջ 19
- ²⁷ Լ.Խաչիկյան, Վ.Արևելցու «Վասն քանին մասանց» աշխատություն, ՀԳԱ Տեղեկագրեր, 1943թ., էջ 84-85:
- ²⁸ Գ.Տահուկյան, Զերականական և ուղղագրական աշխատությունները..., էջ 249:
- ²⁹ Գ.Տահուկյան, Զերականական և ուղղագրական աշխատությունները..., էջ 255:
- ³⁰ ԳԱ «Տեղեկագիր» 1943 թիվ 2, էջ 86 (ըստ Լ.Խաչիկյանի հոդվածի):
- ³¹ Վ.Արևելցի, Մեկնութիւն քերականի, էջ 101 (ըստ ԳԱ հրատ. 1972թ. Լ.Խաչիկյանի):
- ³² Վ.Արևելցի, Մեկնութիւն քերականի, էջ 100 (ըստ ԳԱ հրատ. 1972թ. Լ.Խաչիկյանի):
- ³³ Վ.Արևելցի, Մեկնութիւն քերականի, էջ 101 (ըստ ԳԱ հրատ. 1972թ. Լ.Խաչիկյանի):
- ³⁴ Հ.Մխիթարյան, «Ակնարկներ հայերենի շարահյուսության պատմության», 1990թ., էջ 24:
- ³⁵ Հ.Բարսեղյան, «Խոսքի մասերի ուսմունքը», 1980թ., Ե., էջ 37:
- ³⁶ Գ.Տահուկյան, Ուղղագրական և քերական աշխատություն հին և միջնադարյան Հայաստանում, 1954թ., Ե., էջ 255:
- ³⁷ Գ.Տահուկյան, Ուղղագրական և քերական աշխատություն հին և միջնադարյան Հայաստանում, 1954թ., Ե., էջ 260:
- ³⁸ Հ.Երզնկացի, «Հաւաքումն մեկնութեան քերականի, աշխատասիրությանը դոկտոր Լ.Խաչերյանի, Լոս-Անջելես, 1983թ.», էջ 193:
- ³⁹ Հ.Երզնկացի, «Հաւաքումն մեկնութեան քերականի, աշխատասիրությանը դոկտոր Լ.Խաչերյանի, Լոս-Անջելես, 1983թ.», էջ 227:
- ⁴⁰ Լ.Խաչերյան, Գրչության արվեստի լեզվաքերականական տեսություն, Ե., 1962, էջ 288:
- ⁴¹ Լ.Խաչերյան, Գրչության արվեստի լեզվաքերականական տեսություն, Ե., 1962, էջ 306:
- ⁴² Լ.Խաչերյան, Գրչության արվեստի լեզվաքերականական տեսություն, Ե., 1962, էջ 101: